# Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հուշաթերթի իրահանգ



2014

Տեղական ինքնակառավարման ընտրություններ

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները

### 1. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի հետ կապված լիազորություններ.

- Հրավիրում եք տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստ *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 8.2)։*
- Վարում եք տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1.բ)։*

### 2. Վարչական գործառույթներ.

- Իրավունք ունեք առաջադրանքներ տալ հանձնաժողովի նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին և հանձնաժողովի այլ անդամների *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1.ե)։*
- Իրավունք ունեք հրապարակել կարգադրություն *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 30.1.գ)։*
- Ստանում եք և Ձեր մակագրությամբ բաժանում տեղամասային ընտրական հանձնաժողով մտած ընտրական փաստաթղթերը և տեղամասային ընտրական հանձնաժողովի անունով մտից գրագրությունը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1.գ)։*
- Պատասխանատու եք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի, գույքի և այլ նյութերի ընդունման, պահպանման և ըստ նշանակման հատկացման համար *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 27.1.դ, հոդված 63.6)։*
- Հրապարակայնության ապահովման համար նկատի ունեցեք, որ ընտրական տեղամասում բոլորի համար տեսանելի տեղում պետք է փակցված լինեն *(Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգ՝ հոդված 8)*.

- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի կոնտակտային հեռախոսի և ֆաքսի համարները և այլ տվյալներ,
- ☐ ընտրական վարչակազմի այն իրավական ակտերը, որոնք կվերաբերեն տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությանը,
- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությունները,
- ☐ ընտրողների ցուցակները, ընտրողների ցուցակներում փոփոխությունների ընդգրկման և անճշտությունների բողոքարկման կարգը և ժամկետները:

**Ուշադրություն!**

- քվեարկության օրվանից առնվազն երկու օր առաջ Ձեզ կփոխանցվեն ճշգրտված ցուցակների վերջնական տարբերակները (ընտրական հանձնաժողովի համար հատկացված տարբերակը՝ սեղանի ցուցակը, և հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը՝ պատի ցուցակը) (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 31.11),
- հանրային տեղեկատվության համար հատկացված պատի ցուցակի նախնական տարբերակը պետք է հանեք և նույն տեղում փակցնեք ճշգրտված տարբերակը:

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության նախորդ օրը (14 հունիսի)

### 1. Քվեարկության շենքի կազմակերպման հետ կապված լիազորություններ.

- պատասխանատու եք քվեարկության շենքի կազմակերպման համար, նկատի՛ ունեցեք *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 58.4).*
  - ☐ քվեարկության շենքում յուրաքանչյուր 500 ընտրողի համար պետք է կազմակերպվի առնվազն մեկ քվեախցիկ, որտեղ պետք է լինի մեկ գրիչ,
  - ☐ պետք է տեղեր առանձնացվեն ընտրողների գրանցման համար և տեղադրվեն սեղաններ՝ գրանցում իրականացնող անձանց համապատասխան,
  - ☐ բոլորի համար տեսանելի տեղում պետք է տեղադրվի ընտրական քվեատուփը,
  - ☐ ընտրական քվեատուփի մոտ պետք է տեղադրվի սեղան՝ հատուկ ծրարների համար:
- Քվեարկության շենքում բոլորի համար տեսանելի տեղում պետք է փակցված լինեն *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 58.4.դ, 58.5).*
  - ☐ ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը),
  - ☐ ընտրողների հատուկ ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակը),
  - ☐ շարժական քվեատուփի ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
  - ☐ կուսակցական ցուցակները,
  - ☐ թեկնածուների ցուցակները,

- ☐ քվեարկության հրահանգը և ԿԸՀ-ի կողմից սահմանված, ընտրական քվեաթերթիկների լրացման կարգը,
- ☐ քաղվածք Օրենքից, թե որ դեպքում է ընտրական քվեաթերթիկն անվավեր,
- ☐ քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունները:

**2. Ընտրական փաստաթղթերի ընդունման հետ կապված լիազորությունները.**

Հիշեցե՛ք. քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 12 ժամ առաջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից պետք է ստանաք ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները: Ստանալիս **անպայման հաշվե՛ք** և համեմատե՛ք փոխանցված ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների թվաքանակությունը հանձնման-ընդունման ակտում տեղ գտած տվյալների հետ *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 63.9–11):* Ստուգե՛ք, որ քվեաթերթիկների վրա նշված լինի Ձեր ընտրական տեղամասի և ընտրատարածքի համարը:

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության օրը (15 հունիսի)

### Ժամը 07:00-08:00

- [ ] Ժամը 07:00-ին բացե՛ք ընտրական տեղամասը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկացրե՛ք ընտրական տեղամասը բացելու և հանձնաժողովի անդամների քվորումի (7 անդամ) մասին *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.1)*:

- [ ] Հանձնաժողովի քարտուղարին փոխանցե՛ք քվեարկության օրվա գործավարության գիրքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները և ցուցադրական արձանագրությունները (փակցվում է բոլորի համար տեսանելի տեղում):

- [ ] Ստուգե՛ք քվեարկության շենքում գտնվող իրավասու անձանց հավատարմագրման վկայականները:

- [ ] Ի ցույց բոլորի, ստուգե՛ք այն փաթեթների ամբողջականությունը, որոնցում զետեղված է հանձնաժողովի հատուկ կնիքը և բացե՛ք այն (կնիքի համարը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության գրքի 9-րդ էջում) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.բ)*:

- [ ] Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամների բացահայտելու համար անցկացրե՛ք վիճակահանություն, որին մասնակցում են կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.դ)*:

- [ ] Անցկացրե՛ք վիճակահանություն հանձնաժողովի անդամների միջև՝ մնացած գործառույթների (ընտրողների հոսքը կարգավորողն, ընտրողների գրանցում իրականացնող, քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամներ) բաշխման համար *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.2.ե)*:

- [ ] Բողոքների գրանցման գործընթացի դիտարկման նպատակով վիճակահանություն անցկացրե՛ք ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից առավելագույնը 2 ներկայացուցչի բացահայտման համար: Հիշեցե՛ք՝ վիճակահանությամբ բացահայտված ներկայացուցիչները և հանձնաժողովի քարտուղարը չի կարելի, որ լինեն միևնույն ընտրական սուբյեկտի կողմից ներկայացված անձինք *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.5):*

- [ ] Հայտարարե՛ք ընտրողների թիվը ընտրողների ընդհանուր ցուցակում, ընտրողների հատուկ ցուցակում, նաև շարժական քվեատուփի ցուցակում (այսպիսինի գոյության դեպքում) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.6.ա):*

- [ ] Հայտարարե՛ք ստացած ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակությունները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.6.բ):*

- [ ] Ստուգե՛ք, որ ընտրական քվեատուփերը դատարկ լինեն, և՛ հիմնական, և՛ շարժական քվեատուփերը զմռսակնքե՛ք անհատական համար ունեցող զմռսակնիքով *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.6.գ):*

- [ ] Ընտրողների՝ յուրաքանչյուր գրանցում իրականացնողի փոխանցե՛ք. ցուցակ՝ 300-ընտրողով (ընտրողների գրանցում իրականացնողներից մեկին փոխանցե՛ք նաև՝ ընտրողների հատուկ ցուցակ), ընտրական քվեաթերթիկների մեկական նոթատետր (կապոց), նշմարման հեղուկ, գրանցում իրականացնողի կնիք (կնիքի համարը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 9-րդ էջում) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.7):*

- [ ] Ընտրողների հոսքը կարգավորողին փոխանցե՛ք նշմարումը ստուգելու ուլտրամանուշակագույն լապտեր:

- ☐ Քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկողին փոխանցե՛ք հատուկ ծրարները և հիմնական ընտրական քվեատուփը:
- ☐ Հանձնաժողովի անդամներին նյութերը փոխանցելուց հետո, անհապաղորեն, մինչև քվեարկության սկսվելը, հանձնաժողովի քարտուղարի հետ լրացրե՛ք ստուգողական թերթի ինքնապատճենվող ձևը (բացառությամբ առաջին ընտրողի մասին տվյալների): Ուշադրությո՛ւն դարձրեք, որ ստուգողական թերթը ստորագրեն հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.10):

**Ժամը 08:00-ից**

- ☐ Ընտրական տեղամաս եկած առաջին ընտրողն անցնում է գրանցումը և ստանում ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները: Դրանից հետո ցուցո՛ւմ տվեք հանձնաժողովի քարտուղարին, որ առաջին ընտրողի մասին տվյալները գրանցի ստուգողական թերթի վրա, ստորագրի այն և նշի ընտրական քվեատուփերի մեջ ստուգողական թերթերը գցելու ճշգրիտ ժամանակը: Ստուգողական թերթի մեկ օրինակը գցե՛ք հիմնական ընտրական քվեատուփի մեջ, երկրորդ օրինակը՝ շարժական քվեատուփի մեջ (այսպիսինի գոյության դեպքում), իսկ երրորդ օրինակը պահե՛ք *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 61.10):*
- ☐ Առաջին ընտրողի կողմից գրանցումն անցնելուց հետո, հեռախոսով տեղեկացրե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ քվեատուփը/քվեատուփերը զմռսակնքելու, ստուգողական թերթը/ թերթերը քվետուփի/ քվեատուփերի մեջ գցելու և քվեարկությունը սկսելու մասին:

**Ժամը 09:00-ից**

- ☐ Շարժական քվեատուփի միջոցով քվեարկության անցկացումը հանձնարարե՛ք վիճակահանությամբ բացահայտված հանձնաժողովի 2 անդամներին և նրանց փոխանցե՛ք *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66.3).*

- շարժական քվեատուփի ցուցակը,
- ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և ընտրողների գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակի ընտրական քվեաթերթիկներ,
- հատուկ ծրարներ,
- զմռսակնքված շարժական ընտրական քվեատուփը, որում պետք է զետեղված լինի ստուգողական թերթը:

**Ժամը 10:00**

**Ժամը 12:00**

**Ժամը 15:00**

**Ժամը 17:00**

Խնդրեք ընտրողների գրանցումն իրականացնողներին, առանց քվեարկության ընթացակարգին խանգարելու, հաշվել ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իրենց կողմից հատկացված ընտրական քվեաթերթիկների քանակությունները (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված ընտրական քվեաթերթիկների քանակը): Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, ընտրողների գրանցումն իրականացնողն անհապաղորեն պետք է բացատրագիր գրի, որը պետք է կցեք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:

Ժամը **12:00-ին** և ժամը **17:00-ին** ընտրողների գրանցումն իրականացնողների հետ հաշված, ընտրողների ցուցակներում քվեարկության մասնակից ընտրողների ստորագրությունների թիվը հանձնաժողովի քարտուղարին նշել տվեք քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրություններում և տեղեկացրե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65.6):*

## Մինչև ժամը 20:00-ը

- Շարժական ընտրական քվեատուփը ընտրական տեղամաս պետք է վերադարձվի ժամը 20-ից ոչ ուշ *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66.1):*

## Ժամը 20:00-ից մինչև քվեատուփը բացելը

- ☐ Ժամը 20:00-ին քվեարկությունն ավարտված հայտարարե՛ք: Հանձնաժողովի անդամներից մեկին հանձնարարե՛ք հաշվել հերթում կանգնած ընտրողների քանակը: Քվեարկությունն ավարտվելուց հետո, փակե՛ք ընտրական տեղամասի դուռը և զմռսակնքե՛ք քվեատուփի ճեղքը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65.8):*

- ☐ Քվեարկությունն ավարտվելուց հետո, գնացե՛ք ընտրողների գրանցումն իրականացնողներից յուրաքանչյուրի մոտ և հանձնարարե՛ք մինչև քվեարկության ավարտը իրենց կողմից գրված բացատրագրերում (այսպիսինի գոյության դեպքում) նշված տվյալների նախատեսմամբ հաշվել.

  **Ընտրողներին տրված ընտրական քվեաթերթիկների թիվը** − **Վնասված ընտրական քվեաթերթիկների թիվը** = **Ընտրողների ստորագրությունների թիվը**

  **Եթե** անհամապատասխանություն է հայտնաբերվում, ընտրողների գրանցում իրականացնողը կրկին պետք է հաշվի և ճշգրտի քանակությունները: Եթե հավասարությունը կրկին չի ստացվում, գրանցում իրականացնողը պետք է բացատրագիր գրի (պատճառի մատնանշմամբ), որը պետք է կցվի ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:

- ☐ Վերոնշյալ տվյալները որոշելուց հետո, գրանցում իրականացողներին հանձնարարե՛ք բոլոր տեսակի ցուցակներում հաշվել նաև քվեարկության մասնակից ընտրողների գենդերային տվյալները: Տվյալները փոխանցե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

- ☐ Անցկացրե՛ք վիճակահանություն՝ 3 (կամ, անհրաժեշտության դեպքում, ավելի) հաշվողների բացահայտման համար *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.1):*

- ☐ Դիտորդների միջև վիճակահանություն անցկացրե՛ք՝ 2 վերահսկողի բացահայտման համար, եթե դիտորդներն իրենց կազմից փոխհամաձայնությամբ չեն կարողանա ընտրել ընտրական քվեաթերթիկները հաշվելու ընթացակարգը վերահսկող անձանց *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.1)։*

- ☐ Վիճակահանություն անցկացրե՛ք ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից ոչ ավելի, քան 2 ներկայացուցչի բացահայտման համար, որոնք հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ բացահայտված հաշվողների հետ մասնակցում են իսկական (վավեր) կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկների հաշվելու գործընթացին *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.2)։*

- ☐ Հաշվողներին ցո՛ւցում տվեք հաշվել ընտրողների ստորագրությունների քանակն ընտրողների ընդհանուր ցուցակում, ընտրողների հատուկ ցուցակում, ինչպես նաև շարժական քվեատուփի ցուցակում (այսպիսինի գոյության դեպքում) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3)։*

- ☐ Հանձնաժողովի քարտուղարին ցուցո՛ւմ տվեք առանձին-առանձին զմռսակնքել ընտրողների միասնական ցուցակի, ընտրողների հատուկ ցուցակի, ինչպես նաև շարժական քվեատուփի ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) սեղանի տարբերակները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.3)։*

- ☐ Հաշվողներին ցուցո՛ւմ տվեք առանձին-առանձին զմռսակնքել չօգտագործված և վնասված ընտրական քվեաթերթիկները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.4)։*

- ☐ Զմռսակնքված փաթեթի վրա նշե՛ք ընտրական տեղամասի անվանումը, համարը, ընտրական փաստաթղթերի տեսակը և հաշվողների հետ ստորագրե՛ք *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 67.5)։*

## Քվեատուփի բացումը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների լրացումը

- ☐ Ստուգե՛ք քվեատուփի, նաև շարժական քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում), ընտրական տեղամասի՝ բացառության դեպքում ստեղծված քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում) զմռսակնիքի ամբողջականությունը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.1):*

- ☐ Նախ՝ բացե՛ք շարժական ընտրական քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում): Հաշվողները ստուգում են ընտրական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և որոշում են դրա և հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի նույնականությունը *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.4):*

- ☐ Բացե՛ք հիմնական ընտրական քվեատուփը: Հաշվողները ստուգում են ընտրական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և, դրա իսկականը լինելը հավաստելու նպատակով, համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի հետ *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.5):*

- ☐ Բացե՛ք բացառության դեպքում ստեղծված ընտրական տեղամասի ընտրական քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում): Հաշվողները ստուգում են ընտրական քվեատուփում ստուգողական թերթի առկայությունը և, դրա իսկականը լինելը հավաստելու նպատակով, համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված ստուգողական թերթի հետ:

- ☐ Եթե ամեն ինչ կարգին լինի, հաշվողները իրար պետք է խառնեն ընտրական տեղամասի շարժական, հիմնական և բացառության դեպքում ստեղծված ընտրական քվեատուփերից դատարկված հատուկ ծրարները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 68.5):*

☐ Հաշվողներին ցուցո՛ւմ տվեք տեսակավորել ընտրական քվեաթերթիկները: Հանձնաժողովի հետ մեկտեղ մեկ առ մեկ քվեարկե՛ք կասկածելի համարված ընտրական քվեաթերթիկները *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 69.5):*

☐ Հաշվողներին ցուցո՛ւմ տվեք հաշվել անվավեր ընտրական քվեաթերթիկները և յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայները/ընտրական քվեաթերթիկները *(Ընտրական օրենսգիրք - հոդված 69.6–9):*

☐ Հանձնաժողովի քարտուղարի հետ ստուգե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների տվյալների ճշտությունը.

| Ընտրական սուբյեկտի ստացած ձայների քանակը | + | Անվավեր ընտրական քվեաթերթիկների քանակը | ≤ | Ընտրողների ստորագրությունների քանակը |
|---|---|---|---|---|

☐ Հաշվողներին ցուցո՛ւմ տվեք կապել և զմռսակնքել. անվավեր ընտրական քվեաթերթիկները (առանձին են զմռսակնքվում այլ ընտրական տեղամասի համար հատկացված անվավեր ընտրական քվեաթերթիկները), յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ընտրական քվեաթերթիկները (փաթեթների վրա ստորագրում են հաշվողները և հանձնաժողովի նախագահը) *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 69.6–9):*

☐ Հանձնաժողովի քարտուղարը, Ձեզ հետ համաձայնեցնելով, լրացնում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները կազմելիս՝ պետք է նկատի առնվեն ընտրողների գրանցումն իրականացնողների բացատրագրերում (այսպիսինի գոյության դեպքում) մատնանշված տվյալները: Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները գրանցում է գրանցամատյանում: Հանձնաժողովի

բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները: Լրացված քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները վավերացրե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքով: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների պատճենները, ուղղման արձանագրության/արձանագրությունների և ընտրողների գրանցում իրականացնողների գրավոր բացատրագրերի հետ (այսպիսինի գոյության դեպքում) անհապաղորեն ուղարկե՛ք ԿԸՀ-ին *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.14):*

- ☐ Հանձնաժողովի քարտուղարը պատճենահանում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները: Պատճեն հատկացնելիս՝ Դուք պետք է հանձնաժողովի քարտուղարի հետ ստորագրեք այն և վավերացնեք հանձնաժողովի հատուկ կնիքով *(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.8):*

- ☐ Առանձին-առանձին փաթեթներով զմռսակնքե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքը (հանձնաժողովի հատուկ կնիքի զմռսակնքված փաթեթի վրա ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները) (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 71.13), ընտրողների գրանցումն իրականացնողների կնիքները, քվեարկության օրվա գործավարության մատյանը, դիմումների/բողոքների հետ, գրանցամատյանը: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները չեն զմռսակնքվում:

- ☐ Զմռսակնքված ընտրական փաստաթղթերը զետեղե՛ք մեծ արկղի կամ տոպրակի մեջ և տարե՛ք ընտրատեղամասային ընտրական հանձնաժողով: Արկղից/տոպրակից առանձին տարե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները, գրանցամատյանի, քվեարկության օրվա գործավարության մատյանի և դիմում-բողոքների զմռսակնքված փաթեթները:

| Վերստուգեք տվյալները | | Գրանցող | | | | | Ուղարկեք SMS-ով |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | V | |
| Ժամը 10-ին | Տրված քվեաթերթիկներ | | | | | | Ստորագր-ությունների գումարը ⇩ |
| | Խոտան քվեաթերթիկներ | | | | | | |
| | Ստորագրությունների թվաքանակը | | | | | | |
| Ժամը 12-ին | Տրված քվեաթերթիկներ | | | | | | Ստորագր-ությունների գումարը ⇩ |
| | Խոտան քվեաթերթիկներ | | | | | | |
| | Ստորագրությունների թվաքանակը | | | | | | |
| Ժամը 15-ին | Տրված քվեաթերթիկներ | | | | | | Ստորագր-ությունների գումարը ⇩ |
| | Խոտան քվեաթերթիկներ | | | | | | |
| | Ստորագրությունների թվաքանակը | | | | | | |
| Ժամը 17-ին | Տրված քվեաթերթիկներ | | | | | | Ստորագր-ությունների գումարը ⇩ |
| | Խոտան քվեաթերթիկներ | | | | | | |
| | Ստորագրությունների թվաքանակը | | | | | | |
| Վերջնական (ժամը 20-ին) | Տրված քվեաթերթիկներ | | | | | | Ստորագր-ությունների գումարը ⇩ |
| | Խոտան քվեաթերթիկներ | | | | | | |
| | Ստորագրությունների թվաքանակը | | | | | | |
| | Գենդերային տվյալներ | | | | | | |

**Ուշադրություն!**

- Ստուգե՛ք տվյալների ճշգրտությունը հետևյալ բանաձևով. ընտրողներին տրված քվեաթերթիկների թվից – փասսված քվեաթերթիկների թիվը = ընտրողների ստորագրությունների թվին:
- Երաշխավորվում է գրանցում իրականացնողների մոտ տվյալների վերստուգումն իրականացնել ըստ համամասնական ընտրական քվեաթերթիկների:
- Յուրաքանչյուր գրանցում իրականացնողից ստացած ստորագրությունները հանրագումարե՛ք ժամը 10-ին, 12-ին, 15-ին, 17-ին, 20-ին և ստացված տվյալը կարճ տեքստային հաղորդագրությամբ (sms) **անհապաղորեն** ուղարկե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տրված հեռախոսահամարին: